ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

9 հուլիսի 2021 թվական N48-Ա

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 9-ի N6 արտահերթ նիստի օրակարգը՝

1)Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N51-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.

2)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Սևադա Սոսի Հայրապետյանին օտարելու մասին.

3)Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը հողամաս օտարելու մասին.

4)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.

5)Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի N5 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

6)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Նաիրա Ալյոշայի Հայրապետյանին օտարելու մասին

7) Մեղրի համայնքի փողոցները անվանափոխելու մասին.

8)Մեղրի համայնքի 2021 թվականի բյուջեի եկրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (10)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. հուլիսի 9

ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
9 հուլիսի 2021 թվական N49-Ն

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N51-Ն որոշման հավելվածում կատարել լրացումներ՝ լրացնելով.
1)«Մեղրի, Շվանիձոր, Լեհվազ բնակավայրերի մանկապարտեզների և Ագարակ բնակավայրի մարզադպրոցի համար գույքի ձեռքբերում » ծրագրի անձնագիրը,
2)«Մեղրի քաղաքի բազմահարկ շենքերի վերելակների արդիականացում» ծրագրի անձնագիրը.
3)«Խաղահրապարակի հիմնում և կասկադի կապիտալ վերանորոգում Մեղրի քաղաքում » ծրագրի անձնագիրը.
4)«Ճանապարհային ենթակառուցվածքների բարեկարգում Ագարակ քաղաքում » ծրագրի անձնագիրը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. հուլիսի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

9 հուլիսի 2021 թվական N50-Ա

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՍԵՎԱԴԱ ՍՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Սևադա Սոսի Հայրապետյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի քաղաքի Զարավար Անդրանիկի փողոց 5-րդ փակուղի թիվ 12 հասցեում գտնվող 96,67 քմ ընդհանուր մակերեսով մառանը, ծածկը և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,03741 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0071-0026, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N23062021-09-0138 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Սևադա Սոսի Հայրապետյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով սահմանված գներով.

1)մառանի համար 10 000 դրամ x 0,1209 x 55,57 քմ = 67 185 /վաթսունյոթ հազար մեկ հարյուր ութսունհինգ/ ՀՀ դրամ,

2)ծածկի համար 10 000 դրամ x 0,1209 x 41,1 քմ = 49 690 /քառասունինը հազար վեց հարյուր իննսուն / ՀՀ դրամ,

3)պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար 1221 դրամ x374,1քմ=456 771/չորս հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր յոթանասունմեկ / ՀՀ դրամ:

4)համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (10)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ		
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. հուլիսի 9 ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

9 հուլիսի 2021 թվական N51-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ և 63-րդ հոդվածների դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ և հաշվի առնելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 25-ի N2/փ-205 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի և որպես առաջնահերթ միջոցառում, հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրել համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության <<ընդհանուր օգտագործման հողեր>> գործառնական նշանակության 0.0111 հա մակերեսով հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 09-005-1087-0001-ից/:

2.Սույն որոշման 1-ին կետով հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրված 0,0111 հա մակերեսով հողամասը, պաշտպանական նպատակներով օգտագործելու համար, անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվության) օտարել Հայաստանի Հանրապետությանը:

3.Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ ----------
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ----------
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ----------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ ----------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ----------
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ----------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ----------
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ----------
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ----------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. հուլիսի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
9 հուլիսի 2021 թվական N52-Ա

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 610-612-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 և 2019 թվականի մայիսի 10-ի N572-Ն որոշումներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող՝ Մ-2 Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ379+700 հատվածի աջակողմյան հարակից 0,9 հա հողամասը 3 ամիս ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել <<Մեղրու ՃՇՇՁ>> ՍՊԸ-ին, սահմանելով ամսեկան 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ վարձավճար, որպես հողագրունտի հանույթ օգտագործելու նպատակով:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ ----------
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ----------
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ----------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ ----------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ----------
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ----------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ----------
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ----------
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ----------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2021թ. հուլիսի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հուլիսի 2021 թվականի N53-Ա

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N5 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի «2021 թվականին օտարման կամ օգտագործման տրամադրման ենթակա հողամասերի ցանկը հաստատելու մասին» N5 որոշման հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. հուլիսի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հուլիսի 2021 թվականի N54-Ա

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՆԱԻՐԱ ԱԼՅՈՇԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Նաիրա Ալյոշայի Հայրապետյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 5-րդ փակուղի թիվ 1/3 հասցեում գտնվող 30,4 քմ ընդհանուր մակերեսով ծածկը և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,04992 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Նաիրա Ալյոշայի Հայրապետյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով սահմանված գներով.

1)Ծածկի համար 10 000 դրամ x 0,1209 x 30,4 քմ = 36 754 /երեսունվեց հազար յոթ հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամ,

2)Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար 1221 դրամ x 499,2 քմ = 609 523 (վեց հարյուր ինը հազար հինգ հարյուր քսաներեք / ՀՀ դրամ:

3)Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2021թ. հուլիսի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հուլիսի 2021 թվականի N55-Ա

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Անվանափոխել Մեղրի համայնքի հետևյալ փողոցները՝

Մեղրի համայնք, Մեղրի քաղաք, հրապարակ հասցեն անվանափոխել-Մեղրի քաղաք Կենտրոնական հրապարակ հասցեով,

Մեղրի համայնք,Կարճևան գյուղ հրապարակ հասցեն անվանափոխել- Կարճևան գյուղ Կենտրոնական հրապարակ հասցեով,

Մեղրի համայնք,Շվանիձոր գյուղ հրապարակ հասցեն անվանափոխել- Շվաիձոր գյուղ Կենտրոնական հրապարակ հասցեով,

Մեղրի համայնք,Վարդանիձոր գյուղ հրապարակ հասցեն անվանափոխել- Վարդանիձոր գյուղ Կենտրոնական հրապարակ հասցեով,

Մեղրի համայնք,Լիճք գյուղ,Այրիչայ թաղամաս հասցեն անվանափոխել -Լիճք գյուղ,Զվար թաղամաս հասցեով,

Մեղրի համայնք,Վահրավար գյուղ,Գելլար հանդամաս հասցեն անվանափոխել -Վահրավար գյուղ,Ծիրանանոց հանդամաս հասցեով,

Մեղրի համայնք,Մեղրի քաղաք,Նորաշեն փողոց հասցեն անվանափոխել -Մեղրի քաղաք,Նորաշենիկ փողոց հասցեով ,

Մեղրի համայնք,Կարճևան գյուղ,Մայրուղի հասցեն անվանափոխել Կարճևան քճուղի հասցեով:

2.Հանձնարարել Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնին՝

1)սույն որոշումն ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել աշխարհագրական անվանումների ռեգիստր վարող պետական լիազոր մարմնին՝ փողոցի վերանվանման պետական գրանցում կատարելու համար.

2)սույն որոշմամբ կատարված փողոցի վերանվանման վերաբերյալ տեղեկություններ տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրիի բաժնին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Մեղրիի» սպասարկման գրասենյակին և Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնին:

3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2021թ. հուլիսի 9
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
9 հուլիսի 2021 թվական N56-Ա
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2021 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից տրված հաղորդումը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (10) Դեմ(0) Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. հուլիսի 9
ք. Մեղրի